ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Անտոնելա Վալմորբիդա
Եվրոպական Ասոցիացիայի հանուն տեղական Ժողովրդավարության Գլխավոր Քարտուղար

Լուսինե Ալեքսանդրյան
«Տեղական Ժողովրդավարության Գրասենյակ» հիմնադրամի պատվիրակ

Սեպտեմբեր 2015

Այս ձեռնարկը պատրաստել են Եվրոպական Միության հանուն Տեղական Ժողովրդավարության Գլխավոր Քարտուղար Անտոնելլա Վալմորբիդան և Հայաստանում "Տեղական Ժողովրդավարության Գրասենյակ" հիմնադրամի տնօրեն Լուսինե Ալեքսանդրյանը, ի ներդրումն "Աջակցություն Հայաստանում տեղական Ժողովրդավարության ամրապնդմանը" ծրագրին (Համայնքների ընտրված ներկայացուցիչների առաջնորդության ամրապնդում), որն իրականացվում է Եվրոպայի Խորհրդի կողմից՝Դանիայի Կառավարության աջակցությամբ: Այս ձեռնարկը նպատակ ունի ներկայացնելու քաղաքացիների մասնակցության ստանդարտներ, մեջբերված տեքստեր, լավագույն փորձի օրինակներ, մասնակցության մեխանիզմներ և օգտակար գաղափարներ, որոնք քննարկվել են 2015թ-ին Հայաստանում տեղի ունեցած մարզային համաժողովների ընթացքում: Այստեղ արտահայտված մտքերը չեն արտացոլում Տեղական և Տարածքային Իշխանությունների Եվրոպայի Խորհրդի կարծիքը:

Բովանդակություն

Որպես նախաբան 4

Հիմնական հարցեր և պատասխաններ 5

Գլուխ 1 : **Հայաստանի օրենսդրությանը վերաբերյալ որոշ դրույթներ** 7

1.1. Քաղաքացիների նախաձեռնություններ 8

1.2. Համայնքի ղեկավարի լիազորություններ 8

1.3. Համայնքի ավագանու լիազորություններ 8

Գլուխ 2 : **Լավագույն փորձից քաղած դասեր** 9

2.1 Հետադարձ հայացք Կոնգրեսի միջոցառումներին (2014/2015) 9

2.1.1 Մասնակցային բյուջետավարում 9

2.1.2 Համայնքի Ավագանու դերը քաղաքացիների մասնակցության գործում 10

2.1.3 Էլեկտրոնային Մասնակցության միջոցներ 11

2.2. Քաղաքացիների մասնակցության փորձի ներկայացում Հարավային Կովկասում 13

2.2.1. Հայաստանում «Տեղական Ժողովրդավարության Գրասենյակ» հիմնադրամ 13

2.2.2. Վրաստանում Տեղական Ժողովրդավարության Գրասենյակ 14

2.2.3.Վրաստանի համայնքների Ասոցիացիան և հանձնառությունը քաղաքացիների մասնակցության գործում 14

2. 3. Քաղաքացիների մասնակցության եվրոպական երկրների փորձի ներկայացում 15

2.3.1. Հասարակական ժամանցային տարածքի վերականգնում, Բուդապեշտ (Հունգարիա) 15

2.3.2. Աղտոտված միջավայր, Բիրգու, Մալթա 16

2.3.3. Համայնքի զարգացում, Լատվիա 17

2.3.4. Տնտեսական ճգնաժամ, Սասիլ, Իտալիա 18

2.3.5 Քաղաքացիական հասարակության զարգացում, Սլովենիա 18

Գլուխ 3 : **Միջոցներ և գործիքներ** 19

3.1. «Քաղաքացիական մասնակցության պատշաճ փորձի ուղեցույց» 19

3.2. Հանրային հանդիպումների կազմակերպման 15 ոսկե կանոն 21

Եզրակացություն 22

Որպես նախաբան

«Զարգացումը չի սկսվում կամ կանգ առնում ապրանքների արտադրությամբ: Այն սկսվում է մարդկանցից և մարդկանց կողմից օգտագործելի ռեսուրսներից, ինչպիսիք են խթանումը, նախաձեռնությունը, կազմակերպչական կարգապահությունը: Առանց այս ամենի բոլոր ռեսուրսները դառնում է անձեռնմխելի և մնում որպես ներուժ»...[1]

Եվրոպայի Խորհրդին միանալուց ի վեր ժողովրդավարական սկզբունքների ամրապնդումն ու գործնական կիրառումն առաջընթաց են ապրում Արևելյան Գործընկերության[2] երկրներում, այդ թվում և Հայաստանում: Ժողովրդավարական կառույցները, ազատ ընտրությունները, իշխանության համար հակակշիռների համակարգի ստեղծումը այն խնդիրներից է, որ վերջերս Հայաստանն իր առջև է դրել հանուն երկրի խաղաղության և զարգացման:

Այս ուղեցույցը գործնական խորհուրդներ կտրամադրի նրանց, ովքեր ընդունում են մարտահրավերը և անցնում մասնակցային տեղական ինքնակառավարման նոր ձևի:

Հաջողություն:

1 Քարոզչականաշխատաժողովիվերաբերյալզեկույցhttp://www.cwp-india.org/
2 Արևելյան գործընկերության երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Վրաստան և Ուկրաինա

Հիմնական հարցեր և պատասխաններ

Ի՞նչ է Տեղական ժողովրդավարությունը

Տեղական ժողովրդավարությունը ժողովրդավարությանն աջակցելու ընդհանուր գործընթացի հիմնական բաղադրիչն է: Այն վերաբերում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների (**տեղական իշխանություններ**, քաղաքացիական հասարակություն և ՁԼՄ) **առկայությանը, գործունեությանը և գործընթացներին (քաղաքական մարմինների ընտրություններ և քաղաքացիների մասնակցություն):** Այն տեղական իշխանությունների և քաղաքացիների միջև շարունակական համագործակցություն է կառուցելու բարեկամ համայնքներ և լուծել պրակտիկայի վրա հիմնված խնդիրներ:

Ինչպիսի՞ն է տեղական ժողովրդավարությունը Հայաստանում

Տեղական իշխանությունների ընտրությունները Հայաստանում սկսվել են 1996թ.-ից, որը հանդիսանում է տեղական ժողովրդավարության ուղղությամբ կատարված նշանակալից քայլ: Համակարգը պարունակում է տեղական կառավարման մեկ մակարդակ: Պետական կառավարումն իրականացվում է 10 մարզում, իսկ տեղական ինքնակառավարումը՝ 915 համայնքում և Երևանում: Տեղական իշխանությունների հզորացմանն ուղղված ռազմավարության կիրառումը պահանջում է Հայաստանի կողմից վավերացված Եվրոպայի խորհրդի **տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի** դրույթների կատարումը(CETS No 122)[3], որը Հայաստանը վավերացրել է 2001-ին, երբ դարձել է Եվրոպայի Խորհրդի անդամ:

Հայաստանը նաև ԵԽ մի քանի պետությունների շարքում է, որը 2013թ-ի մայիսի 13-ին վավերացրել է տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը (Ուտրեխտ, 2009, CETS No. 207): 2013թ. հունիսի 19-ին լրացուցիչ արձանագրության դրույթներն ընդգրկվեցին ՀՀ օրենսդրությունում (Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք): 2014թ. մարտի 26-ին Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսն ընդունեց Հայաստանում տեղական ժողովրդավարության վիճակի մասին թիվ 351(2014)[4] հանձնարարականը, որն ի թիվս այլ առաջարկությունների, Հայաստանի իշխանություններին առաջարկում է կիրառել տեղական մակարդակում քաղաքացիների մասնակցությունը խթանող գործիքներ և ստեղծել բնակչության շրջանում իրենց աշխատանքի և ձեռքբերումների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող հնարավորություններ:

Ի՞նչ է մասնակցային ժողովրդավարությունը

Մասնակցային ժողովրդավարությունը դա տեղական մակարդակում ինքնակառավարման մարմինների ընտրություններն են և քաղաքացիների մասնակցությունը:

Ինչու՞ են կարևոր տեղական ընտրությունները

Ընտրված իշխանությունները պետք է ունենան պարտականություններ իրականացնելու, քաղաքացիներին ծառայություններ մատուցելու իրավասություններ, կարողություններ և միջոցներ: Առանց այս բաղադրիչների վերջիններիս հեռանկարը լոկ պոտյոմկինյան գյուղ է:

Ինչու՞ է կարևոր քաղաքացիները մասնակցությունը

Տեղական մակարդակում ընտրությունները և ընտրված մարմինները չեն կարող համարվել տեղական ժողովրդավարության միակ դերակատարներ:

Տեղական ժողովրդավարությունը ենթադրում է նաև քաղաքացիների հետ մշտական երկխոսություն մեկ ընտրությունից մյուսն ընկած ժամանակահատվածում: Պաշտոնավարման ընթացքում **քաղաքացիների/ ասոցիացիաների հետ կառուցողական երկխոսություն** ունենալու բոլոր քայլերը **քաղաքացիների մասնակցությունը և մասնակցային ժողովրդավարությունը** շարադրող քայլերն են: Դրանք կարող են լինել խորհրդատվությունները, գործընկերություն և ֆորումները կամ համագործակցության ավելի մանրամասն մշակված ձևերը:

3 http://www.parliament.am/library/bazmakoxm/94.pdf
4 Հանձնարարականներ 351 (2014): Անգլերենտարբերակ: http://goo.gl/tYx6L1; Հայերեն տարբերակ: http://www.coe.am/docs/clrae/report1.pdf

Քաղաքացիների մասնակցությունը Հայաստանում

Հայաստանում, ինչպես և Արևելյան Գործընկերության մյուս երկրներում մարտահրավերները վիթխարի են և պետք է դիմակայեն ներկայիս իրավիճակին և անցյալից ժառանգած թուլություններին: Անշուշտ, կենտրոնացված և անսպասելիորեն փլուզված համակարգի ժառանգությունը շատ հետքեր թողեց տնտեսական և քաղաքական դաշտում: Քաղաքական անկայունության և տնտեսության քրոնիկական ոչ բարվոք վիճակի պատճառով համայնքապետարանների մեծ մասը զրկված է պատշաճ կերպով աշխատանք իրականացնելու իրական ռեսուրսներից: Մյուս կողմից այս սահմանափակումների պատճառով քաղաքացիների մասնակցությունը դառնում է հավելյալ արժեք խնդիրների համատեղ լուծման և համայնքի լավագույն խմբի մոբիլիզացման հարցում:

Քաղաքացիների մասնակցություն տեղական մակարդակում

Տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության համատեղ աշխատանքը տեղական մակարդակում հզոր գործիք է համայնքում փոփոխություններ կատարելու և բարելավելու համար:

1. տեղական իշխանություններին տալիս է հնարավորություն **հավաքել գաղափարներ և առաջարկություններ ավելի նպաստավոր լուծում տալու նպատակով**
2. քաղաքացիներից ստանում է մասնակցային վերաբերմունք, հետևաբար և ձևավորում է **պատասխանատվության զգացում** հանրային ապրանքների/սեփականության և համայնքի հանդեպ
3. մշտական երկխոսության միջոցով ձևավորում է հանրային **վստահություն**
4. ներկայացնում է լիարժեք վերահսկողության **գործիք** կոռուպցիայի և սխալ կառավարման դեմ
5. ողջ համայնքի համար **նոր ռեսուրսների և ուժերի** բացահայտման հնարավորություններ է ստեղծում

1.

Հայաստանի օրենսդրության վերաբերյալ որոշ դրույթներ

Ներկա իրավիճակը

Քաղաքացիների մասնակցությունը ՏԻՄ-ում սահմանվում է **տարբեր օրենքներով**, որոնք հնարավորություն են տալիս **իշխանություններին իրականացնել գործընթացներ իրենց համայնքներում և լուծել խնդիրներ համագործակցության և երկխոսության միջոցով**: Քաղաքացիների մասնակցության վերաբերյալ ցանկացած օրենք կամ իրավական փաստաթուղթ տեղական իշխանությունների կողմից պետք է դիտարկվի **ոչ միայն որպես պարտականություն**, այլ իբրև **օգտակար ուղեցույց**, որը կարող է բերել ընդհանուր համագործակցության հանուն համայնքի ծաղկուն ապագայի:

Քաղաքացիների ուղղակի մասնակցությունը ինքնակառավարման համակարգում համարվում է նվազ զարգացած և ուսումնասիրված բաղադրիչ Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի մոտ 20-ամյա պատմության մեջ: Լիարժեք մասնակցային գործընթացը որպես այդպիսին Հայաստանում իրագործված չէ: Այս դեպքում օրենսդրությունն էլ է թերի: ՏԻՄ-ին չի ներկայացվում պարտադիր պահանջ ապահովելու քաղաքացիների մասնակցությունը օրակարգի հաստատման, որոշումների կայացման, մոնիտորինգների ժամանակ: Թեպետ մի շարք օրենքներում **հանրությանը ըստ պատշաճի իրազեկելու պահանջը սահմանված է,** բայց դրա կարևորության գիտակցումը ցածր է ՏԻՄ-երից շատերի մոտ, և կիրառումը զուտ ձևական բնույթ է կրում:
Մեծ մասամբ քաղաքացիները պատրաստ չեն ակտիվորեն մասնակցելու իրենց համայնքի գործերին, նրանք անտարբեր են, հուսահատ իրենց ապրելակերպի, աղքատության պատճառով և պատկերացում չունեն, թե ինչ ձևերով կարող են ազդել իրենց համայնքներում որոշումների կայացման գործընթացների վրա, չգիտեն դրանք իրագործելու հնարավորությունների մասին, ավելին՝ չունեն վստահություն իշխանությունների հանդեպ:

Երկկողմանի այս անպատրաստությունը ունի մի քանի պատճառ. ամենաառաջնայինը ավանդույթի բացակայությունն է, **նախորդ ժամանակաշրջանի կառավարչական մշակույթի ժառանգությունն է, քանի որ կառավարումը ուղղաձիգ գործընթացը էր**, իսկ հասարակությունը՝ կառավարության օբյեկտ: Այս բացը կարելի է նաև բացատրել կոնկրետ օրենսդրական պահանջների բացակայությամբ: Քաղաքացիների մասնակցության իրական պատկերը ոչ միայն մասնակիցներն են աղոտ ընկալում, այլև կառավարությունը ճշգրտորեն չի ըմբռնում: Սա է պատճառը, որ գործընթացին առնչվող բոլոր ֆունկցիաները փոխարինվում են տեղեկատվության տրամադրմամբ և իրազեկության բարձրացմամբ:

Անտարակույս Հայաստանը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, որպեսզի հասնի մասնակցային ժողովրդավարության բարձրագույն աստիճանին, սակայն բարեփոխումներն ու բարելավումներն իրականացվում են օրենսդրական թե՛ ներքին, թե՛ արտաքին մակարդակներում:

Արդյո՞ք մասնակցային գործընթացն արտացոլված է ՀՀ օրենսդրության մեջ

Տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքն ամրագրված է **Սահմանադրության Հոդված** 30-**ում**, ըստ որի Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով հանրային կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Սահմանադրության մեջ հանրաքվեի հիշատակումը չի նշանակում, որ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու մյուս ձևերը բացառվում են, և ներկայիս օրենսդրությունը կարող է սահմանել մասնակցության միջազգային այլ տեսակներ, որոնց կիրառումը սահմանված է եվրոպական խարտիայի հոդված 3, մաս 2-ում: «Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ նիստին, հանրաքվեին կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելը այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով»:

2002թ. ընդունվեց «**Տեղական ինքնակառավարման մասին**» **ՀՀ նոր օրենքը**,[5] որը նպատակաուղղված էր տեղական ինքնակառավարման ինստիտուտների հետագա հզորացմանը, ֆինանսական և վարչական կարողությունների ուժեղացմանը, տեղական մակարդակում ժողովրդավարության զարգացման խթանմանը:
ՀՀ օրենսդրության մեջ կա նախաձեռնող կառույցների պակաս, որոնց համար ընդունելի լինեն քաղաքացիների հանդիպումները և ՏԻՄ ակտերը: Թեև ձևավորված է տեղական **հանրաքվեի** ինստիտուտ, բայց վերջինս գրեթե ձևական բնույթ է կրում:

5 http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm

ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի համաձայն՝ կան մասնակցության հետ ուղղակիորեն կապակցված երկու հիմնական սկզբունքներ: Դրանցից մեկը հասարակության անդամներին հաշվետվողականությունն է, երկրորդը՝ **թափանցիկությունը և տեղական իշխանությունների գործողությունների հրապարակայնությունը**: Քանի որ տեղական ինքնակառավարումը չի պարունակում իշխանական համակարգի մաս և տեղական իշխանություններն էլ գործում են սեփական պատասխանատվությամբ, նրանք իրենց գործողությունների համար հաշվետու և պատասխանատու են բացառապես համայնքի անդամներին:

2013թ. տեղական ինքնակառավարման օրենքում մի շարք փոփոխություններ կատարվեցին:[6] Դրանք արդեն ուժի մեջ են մտել և տեղական իշխանությունների կամ քաղաքացիների կողմից իրականացնելու դեպքում կարող են մասամբ բավարարել մասնակցային գործընթացներով առաջադրված պահանջները և օգտագործվել համայնքի առօրյա կյանքում:

1. 1. Քաղաքացիների նախաձեռնություններ

Ավագանու նիստի օրակարգում որևէ հարցի ընդգրկումը կարող է իրագործվել նաև համայնքում գրանցված 16 եւ ավելի տարեկան մարդկանց կողմից: Որևէ հարց նիստի օրակարգ ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրվում է համայնքի նախաձեռնողների/բնակիչների կողմից և ներկայացվում համայնքի ղեկավարին: Նախաձեռնությունը պարտադիր ներկայացվում է ավագանու նիստին և քննարկվում համայնքի ղեկավարի կողմից այն ստանալուց հետո ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը կարող է կրկին ներկայացվել ավագանու նիստին առաջին քննարկումից հետո ոչ ավելի վաղ, քան վեց ամսում:

Տեղական հանրաքվեի անցկացում, որի արդյունքները կարող են ներկայացվել համայնքի ղեկավարներին և ավագանու անդամներին:

1. 2. Համայնքի ղեկավարի լիազորություններ

Յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել ավագանու անդամին համայնքի բնակիչների ընդունելություն, հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար:

համայնքի բնակիչների համար ստեղծել բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու ՏԻՄ-ի գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով ցանկացած տիպի տեղեկատվություն և հեռահաղորդակցության միջոցներ:

իրազեկման և մասնակցության միջոցառումներ կազմակերպելու համար հարմարավետ և համապատասխան վայր տրամադրել համայնքի անդամներին, ինչպես նաև ստեղծել համեմատաբար անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած սահմանափակ կարողություններով մարդկանց համար:

կազմակերպել տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական կարևոր նախաձեռնությունների և նախագծերի, համայնքի կողմից տրամադրվող հանրային ծառայությունների, զարգացման ծրագրերի, տարեկան բյուջեի, քաղաքաշինական, բնապահպանական ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ և քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների հեղինակներին:

կազմակերպել համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի մասին հանրային լսումներ և քննարկումներ մինչ համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը: Այս քննարկումներում և հանրային լսումներում ստացված և ընդունված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տեղեկատվությունը փոխանցում է համայնքի ավագանուն:

կազմակերպել հանրային լսումներ և քննարկումներ համայնքի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ մինչ համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը: Այս քննարկումներում և հանրային լսումներում ստացված և ընդունված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տեղեկատվությունը փոխանցում է համայնքի ավագանուն:

Ապահովել ավագանու դռնբաց նիստերին քաղաքացիների մասնակցության համար անհրաժեշտ՝ օրենքով նախատեսված պայմաններ, այն է 1. Պատշաճ իրազեկել համայնքի բնակիչներին կայանալիք նիստերի մասին, 2. Նիստի անցկացման սրահում գտնվել ցանկացող մարդկանց ապահովել նստատեղերով:

1. 3. Համայնքի ավագանու լիազորություններ

Անհրաժեշտության դեպքում անցկացնել տեղական հանրաքվե, որը կարող է դիտարկվել որպես քաղաքացիների մասնակցության ակտիվ մասնակցային ձև:

անցկացնել հանդիպումներ համայնքի բնակչության հետ, տեղեկացնել վերջիններիս ավագանու աշխատանքների մասին, ինչպես նաև կազմակերպել ընդունելություններ, դառնալ Ավագանու որևէ մշտական հանձնաժողովի անդամ, մասնակցել հանդիպումներին և աջակցել բնակչության մասնակցությանը ՏԻՄ գործընթացներին:

ստանալ նիստերին վերաբերող փաստաթղթերի փաթեթը մինչ նիստերը:

Օրենքի վերոհիշյալ բոլոր դրույթները թույլ են տալիս համայնքներին խթանել քաղաքացիների մասնակցությունը և հաստատել մասնակցային հնարավորություններ: Համայնքի ղեկավարներին հարկավոր է լինեն շահագրգիռ ու համբերատար բնակչության հետ ներդաշնակ աշխատելու համար:

6 http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4785&lang=arm

2.

Լավագույն փորձից քաղած դասեր

2. 1. Հետադարձ հայացք Կոնգրեսի միջոցառումներին(2014/2015)

2015թ. հուլիսին Հայաստանի երկու համայնքներում՝ Արզականում/Աղվերան/ և Եղեգնաձորում, շուրջ 200 տեղական իշխանություններ մասնակցեցին տարածաշրջանային սեմինար-պարապմունքների՝ ուղղված Հայաստանում տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության աստիճանի բարձրացմանը:

Ստորը ներկայացվում են այս միջոցառումների հիմնական քննարկված թեմաները:

2. 1. 1. Մասնակցային բյուջետավարում?

Ի՞նչ է մասնակցային բյուջետավարումը?

Մի քանի բառով. Ներգրավել քաղաքացիներին և ասոցիացիաներին սահմանելու համայնքի բյուջեի առաջնահերթությունները և դեր հատկացնել վերջիններիս՝ ռեսուրսների բաշխման հարցում:Սա ժողովրդավարական գործընթաց է, որում համայնքի անդամներն ուղղակիորեն որոշում են, թե ինչպես ծախսել հանրային բյուջեի մի մասը: Այն հնարավորություն է տալիս հարկ վճարողներին աշխատել կառավարության հետ՝ բյուջեին վերաբերող որոշումներ կայացնելու համար, որն ուղղակիորեն ազդում են իրենց կյանքի վրա:

Մասնակցային բյուջետավարման կարևոր տարրերն են:

Առաջին՝ քաղաքական կամքի դրսևորում համայնքի ղեկավարների կողմից, որպեսզի համայնքներում մասնակցային գործընթացների արդյունքում կայացվեն որոշումներ և **երկրորդ՝ քաղաքացիական կամքի** դրսևորում բնակչության կողմից, որպեսզի վերջիններիս նեղ շահերն ու հետաքրքրությունները ստորադասվեն համայնքի լայն շահերին ու հետաքրքրություններին: Նշված երկու գործոնների բացակայության դեպքում որևէ համայնքում երբևէ ոչ մի երկխոսություն չի կայանա:
Մասնակցային բյուջետավարման նպատակն է ապահովել ավելի մեծ թվով քաղաքացիների մասնակցություն համայնքային զարգացման ծրագրերին: Հարկ է կիրառել մի քանի խրախուսիչ մեթոդներ, որոնք կդրդեն քաղաքացիներին ավելի ակտիվ մասնակցել բյուջեների ձևավորմանը՝ գլխավորապես հարկերի հավաքագրման միջոցով:

Մասնակցային բյուջետավարման իրականացման քայլերը

Նախ **համայնքի ավագանին** պետք է իրապես մասնակցի որոշումների կայացման գործընթացին որոշակի գումարներ հատկացնելու համար: Եթե տվյալ ծրագիրը կապ ունի ենթակառուցվածքների հետ, ապա նախագծանախահաշվային փաստաթղթեր են կազմվում, մրցույթ է հայտարարվում և անցկացվում հանձնաժողովի կողմից: Մասնակցային բյուջետավարման գործընթաց իրականացնելու համար հարկավոր է հետևել այս քայլերին: Ծրագրերի պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել նրանց հետագա շահագործման և պահպահման ծախսերը: Կարևոր է նաև այն փաստ, թե համայնքը հետագայում կկարողանա իրականացնել ծրագիրը, վերջինիս ողջ ընթացքում սահմանվելու է հանրային վերահսկողություն:

Ստորև բերվում են ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավարման գործընթացը պայմանավորող քայլերը:

- Առաջին հերթին կազմակերպվում են հանդիպումներ քաղաքացիների հետ՝ մասնակցության և վերահսկման այս գործընթացին մասնակցելու վերաբերյալ իրենց մտքերը և առաջարկությունները հավաքելու համար:
- Հաջորդ քայլով մշակվում են չափորոշիչներ, թե ովքեր կամ ինչ խմբեր կարող են մասնակցել:
- Այնուհետև շարունակվում է հանձնաժողովի ձևավորումը: Հանձնաժողովը պետք է լինի վստահելի և ներկայացուցչական. քաղաքացիներից բաղկացած խմբերը ընտրում են ներկայացուցիչ, որը մասնակցելու է բյուջետավարման գործընթացին, իսկ ավելի ուշ աշխատելու է հանձնաժողովի կազմում:
- Այնուհետև հրավիրվում է համայնքային ժողով, որի նպատակն է դասակարգել առաջնահերթությունները և ձևավորել ու տարբերակել որոշակի չափորոշիչների հիման վրա արված առաջարկությունները:
- Հետագայում հրավիրվում են մասնագետներ, մշակվում են ծրագրեր, որոնք ներկայացվում են համայնքի ավագանու կողմից հաստատման և ֆինանսավորման: Ֆինանսական միջոցների սակավության դեպքում դրամահավաքներ են կազմակերպվում:
- Ֆինանսավորում ստացած ծրագրերը մեկնարկում են՝ ապագայում ավելի մեծ ծրագրերի սկիզբ դառնալու նպատակով:

Հնարավոր խնդիրներ

Օրենսդրությամբ բյուջետային գործընթացի քայլերից ոչ բոլորն են կատարվում ժամանակին, եթե դրանք ընդհանրապես կատարվում են: Սակայն բյուջետավարման գործընթացում ամենից շատ թերացումները լինում են այդ **գործընթացի հրապարակայնությունն** ապահովելիս: Համայնքների ղեկավարները, մեծ մասամբ, գերադասում են **միակողմանի որոշումներ** կայացնել և ավագանու անդամներին անգամ հազվադեպ են իրենց գործողությունների մասին տեղեկացնում: Այսպիսի պայմաններում դժվար է պատկերացնել, որ համայնքի բնակչությունը իրապես, այլ ոչ թե ձևականորեն կընդգրկվի բյուջետավարման գործընթացում: **ՏԻՄ-երի գործունեության շուրջ բնակչության կարծիքի վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայության պատճառով** բավականին դժվար է վերջիններիս գործունեության մասին օբյեկտիվ գնահատական տալը: Կարելի է ենթադրել, որ ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակչության գնահատականը այնքան էլ դրական չէ: Մասնակցային բյուջետավարման մեջ մանրուքներ չկան: Գործընթացն իր մեջ ներառում է մտքերի, գաղափարների հավաքագրում, քվեարկություն, գնահատում, որոշումների կայացում, ծրագրերի հաստատում և իրագործում, հանրային վերահսկողություն, ձեռք բերված արդյունքների պահպանում և այլն:

Հայաստանյան դիտարկումներ.

- Հայաստանում փոքր համայնքները չունեն բավականաչափ ռեսուրսներ քաղաքացիների կարիքները հոգալու համար, ուստիև այս պարագայում վերջիններիս մասնակցության ապահովումը դյուրին չէ: Քաղաքացիներն իրենց հերթին չեն վստահում իշխանություններին, քանի որ վերջիններս իրենց հետ երբևէ հաշվի չեն նստում:
- Քաղաքացիները տարբեր կարծիքներ են հայտնում և առաջարկություններ անում որոշ թեմաների շուրջ, իսկ համայնքների ղեկավարների համար իրատեսական չէ այնպիսի որոշման կայացումը, որն ընդունելի լինի թեկուզ մեծամասնության համար:
- Համայնքի ղեկավարների և ավագանու անդամների կողմից մշակված փաստաթղթերը անցնում են տարբեր փուլերով: Սա պահանջում է ժամանակ, մարդկային ռեսուրսներ և ծախսեր, իսկ արդյունքում, շատ հաճախ, հնարավոր չի լինում կյանքի կոչել այդ փաստաթուղթը: Նման դեպքերում քաղաքացիների մասնակցությունը չի կարող որպես իրողություն դիտվել:

2. 1. 2. Համայնքի ավագանու լիազորություններ

Մի քանի բառով. Ժողովրդի իշխանություն իրականացնելու եւ համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի եւ համայնքի ղեկավար: Վերջիններս ընտրվում են այդ պաշտոնում չորս տարի ժամկետով և իրականացնում օրենքով սահմանված իրենց լիազորությունները: Նրանք կարող են հաշվի առնել բնակչության կողմից արված առաջարկություններն ու հանձնարարականները, բայց իրենք են հանդիսանում լիարժեք պատասխանատու վերջնական որոշումների կայացման և իրագործման համար:

Կարևոր տարրերն են:

ՏԱվագանուՏ անդամները մեծ դեր են խաղում տեղական ինքնակառավարման համակարգում՝ ներգրավելով և ապահովելով մասնակցություն որոշումների կայացման գործընթացում:

Ավագանին կարող է՝

1. մշակել և համապատասխան ձևով փոփոխել քաղաքացիական մասնակցության կանոնները,
2. տեղեկացնել բնակչությանը քաղաքացիական մասնակցության կանոնների մասին,
3. աջակցել և վերահսկել քաղաքացիական մասնակցության կանոնների կատարման գործընթացը:

Քայլեր ուղղված ավագանու անդամների համագործակցությանը քաղաքացիների հետ.

- ✔ Լիարժեք իրազեկում ապահովելու համար ավագանին պետք է տեղեկատվություն տարածի իր գործունեության վերաբերյալ, աջակցի քաղաքացիներին ՏԻՄ-ի վերապատրաստման դասընթացների և ուսուցման ծրագրերում ընդգրկելու համար, ներգրավի նրանց որոշումների կայացման գործընթացի մեջ, ուսումնասիրի նրանց կարծիքները, խորհուրդներ հարցնի, ապահովի նրանց մասնակցությունը նիստերին և այլն:
- ✔ Ավագանին պետք է նպաստի երկկողմանի հետադարձ կապի ապահովմանը, քանի որ բնակչության կողմից ստացված առաջարկությունները և հանձնարարականները կարող են արժեքային ազդեցություն ունենալ համայնքի հետագա ծրագրերի զարգացումներին: Տեղական ինքնակառավարմանը մասնակցող քաղաքացիները պետք է համոզված լինեն, որ իրենց մասնակցությամբ ազդում են լուրջ խնդիրների լուծման, դրանց շուրջ արվող առաջարկությունների և որոշումների կայացման գործընթացի վրա: Ավագանին պետք է իրապես գնահատի համայնքի կարծրատիպերը, մտածելակերպը և օգտագործի դյուրին միջոցներ բնակչության հետ արագ և արդյունավետ համագործակցելու համար: Համայնքը պետք է առավել տեղեկացված լինի տեղական ինքնակառավարման մակարդակում մասնակցության որոշակի գործառույթներ իրականացնելու հնարավորությունների մասին: (15 ոսկե կանոն քաղաքացիների հանդիպումները կազմակերպելու վերաբերյալ կարելի է գտնել ուղեցույցի վերջում)

- Ամենակարևոր միջոցը դա վստահությունն է «ավագանու ինստիտուտ» հասկացության նկատմամբ, որ այն ի զորու է իսկապես ազդել համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշմանը և պահանջել համայնքին վերաբերող որևէ պաշտոնական տեղեկանք: Ավագանին պետք է իրապես դառնա կապող օղակ համայնքի ղեկավարի և բնակչության միջև:

- Ավագանիների գլխավոր գրասենյակներ կամ նստավայրեր, որտեղ կարելի է կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, պետք է գործեն Հայաստանի բոլոր համայնքներում: «Ավագանու նստավայր» հասկացությունը համայնքների ղեկավարներն ու ավագանու անդամները շփոթում են այն «վայր»-ի հետ, որտեղ ավագանին անցկացնում է իր նիստերը: Որոշ դեպքերում համայնքների ղեկավարները չեն ստեղծում բավարար պայմաններ ավագանիների նստավայրում վերջիններիս պատշաճ գործունեության համար:

- Ավագանին պետք է հաշվետու լինի համայնքի անդամների առջև, աջակցի իր գործունեության թափանցիկություն ապահովմանը:

Հայաստանյան դիտարկումներ.

- Շատ փոքր համայնքներում ավագանին չունի նստավայր: Նրանք, լավագույն դեպքում, պարզապես հանդիպում են բնակիչներին բակերում կազմակերպված հավաքների ժամանակ և քննարկում վերջիններիս կողմից արված առաջարկությունները՝ հետագայում դրանք համայնքի ղեկավարին ներկայացնելու համար: Նույնիսկ կան գյուղեր, որտեղ չկա գյուղապետարանի շենք:

- Հակառակ սրան կան նաև համայնքներ, որտեղ ավագանու անդամներին հատկացված է նստավայր, ինչպես նախատեսված է օրենքով: Համայնքի բնակչությունն այստեղ է քննարկում համայնքի բյուջեն, իսկ հետո տեղեկանում ավագանու անդամների հանդիպումների արդյունքներից: Անհրաժեշտ է ընդլայնել ավագանու ինստիտուտի լիազորությունները՝ վերջինիս դերը բարձրացնելու և վերահսկողության որոշակի լծակներ տալու համար:

- Շատ համայնքներում ավագանին հաշվետվություն չի ներկայացնում հանրությանը, քանի որ բնակչությունը հետաքրքրված չէ վերջիններիս գործունեությամբ սոցիալական ծանր պայմանների պատճառով, ինչպես նաեւ Հայաստանում չի ձեւավորված այդպիսի հաշվետվողականության ավանդույթ :

- Հերթական նիստից յոթ, իսկ արտահերթ նիստից մեկ օր առաջ ավագանու անդամներին պետք է տամադրվեն նիստին վերաբերող փաստաթղթերի փաթեթներ: Որոշումների նախագծերը հիմնականում տրամադրվում են միայն նիստի ընթացքում: Երբեմն դրանք ընդամենը օրակարգին կցված ինչ-որ «Լրացուցիչ հարցեր» են: Ավագանու անդամներն այս փաստաթղթերը կարդում են քվեարկությանից մի քանի րոպե առաջ և բնակաբանար հնարավորություն չունեն այս որոշումների նախագծերի շուրջ խորհրդակցել իրենց ընտրազանգվածի հետ:

- Ավագանու անդամներին տրամադրվող կայանալիք նիստին վերաբերվող բոլոր փաստաթղթերը պիտի հրապարակվեն Ավագանու համայնքային նստավայրում, սակայն օրենքի այս պահանջը համատարած կերպով խախտվում է, դրանք չեն հրապարակվում ոչ առկա նստավայրերում, ոչ էլ համայնքապատկան որեւէ այլ տիրույթում, ինչի պատճառով հանրությունը մնում է անտեղյակ այդ փաստաթղթերին:

Չնայած նրան, որ այս թերությունների գրեթե կեսը տեղի է ունենում համայնքների ղեկավարների ոչ-մասնագիտական մոտեցման պատճառով, բայց և այնպես դրանց վերացման հարցում ավագանու անդամների դերը էական է: Նրանք կարող են բանակցել համայնքների ղեկավարների հետ, հորդորել կամ խրախուսել, ստիպել նրանց ըստ պատշաճի կատարել իրենց պարտականությունները և հետևել օրենքով սահմանված կարգին:

2. 1. 3. Էլեկտրոնային Մասնակցության միջոցներ

Մի քանի բառով. Համացանցը և համակարգիչները կարող են համարվել հեղաշրջող միջոցներ քաղաքացիների հետ կապ հաստատելու համար նույնիսկ հեռավոր վայրերում խորհրդատվության, արագ դիտարկումների,

Կարևոր տարրերն են:

Տեղական ժողովրդավարությունը լիարժեք է, երբ երաշխավորված է քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին: Ժողովրդավարության մյուս կարևոր երաշխիքը երկրում ազատ և անկախ ընտրությունների անցկացումն է: Ողջ աշխարհում **իշխանությունների հանդեպ վստահության պակաս կա**, Հայաստանը ևս բացառություն չէ: Ինչքան բարձր է իշխանությունների մակարդակը, այնքան ցածր է վստահությունը նրանց հանդեպ: Մասնակցության աստիճանի բարձրացումը անհրաժեշտ է ոչ միայն քաղաքացիների, այլև հենց իշխանությունների համար, քանի որ այդ դեպքում նրանց բոլոր որոշումները կլինեն շատ ավելի օրինական:

Էլեկտրոնային գործիքներն ունեն շատ կարևոր դերակատարում քաղաքացիների մասնակցության աստիճանի բարձրացման, ինչպես նաև շատ այլ ոլորտներում այնքան ժամանակ, քանի դեռ նրանք իսկապես համարվում են ամենաարդյունավետ և ամենահարմարավետ միջոցները՝ ցանկացած պահի ցանկացած վայրում յուրաքանչյուրի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար: Հասարակությանը տեղեկացնելու համար անհրաժեշտ է **կարողություններ ձևավորել**: ՏԻՄ-ը պետք է **հակված լինի խորհրդակցելու**, **խորհուրդներ լսելու**:

Քաղաքացիներին իրազեկելու համար շատ կարևոր է ավագանու նիստերի արձանագրությունների տեղադրումը ՏԻՄ-երի պաշտոնական կայքերում /կամ ՏԻՄ-երի համացանցային պաշտոնական կայքերում/, որտեղ քաղաքացիները կկարողանան գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը:
Անհրաժեշտ է նույն կայքերում տեղադրել աճուրդի հանված անշարժ գույքերի և հողատարածքների ցուցակները: Համայնքային գույքը մրցութային կարգով կարող է տրամադրվել վարձակալության կամ կառուցապատման իրավունքով:

Քաղաքացիների հետ երկխոսության ձևավորման և ՏՏ խորհրդատվությունների կազմակերպմանն ուղղված քայլեր.

- Այս օրերին շատ ճանաչված էլեկտրոնային տեղեկատվական միջոց է Facebook սոցիալական ցանցը, որը նույնպես կարելի է օգտագործել՝ քաղաքացիների միջև տեղեկատվության փոխանակումը ապահովելու համար: Հարկ է նշել, որ թափանցիկության տեսանկյունից այն շատ արդյունավետ է, բայց և այնպես տեղեկատվության տեղադրումը կայքում բնավ էլ չի նշանակում մասնակցության ապահովում հաղորդակցության էլեկտրոնային ձևերի միջոցով:

- Էլեկտրոնային միջոցներն անհրաժեշտ են տեղեկատվության տարածման համար: Հայաստանում երիտասարդությունը լայնորեն օգտվում է Twitter, Facebook սոցիալական ցանցերից, բայց միջազգային մասշտաբներով վերցված կան շատ այլ կիրառելի գործիքներ: Անշուշտ էլեկտրոնային կառավարումը շատ կարևոր է, սակայն Համացանցը օգտագործելիս չպետք է մոռանալ մյուս միջոցների մասին:

- Նախատեսվում է Հայաստանում ստեղծել այսպես կոչված «Համայնքային կառավարման համակարգ», որի միջոցով յուրաքանչյուր քաղաքապետ, փոխքաղաքապետ կկարողանա կապ հաստատել մյուս քաղաքապետերի, փոխքաղաքապետերի կամ գործընկերների հետ և քննարկել հրատապ դեպքերը, փնտրել լուծումներ դրանց համար և փոխանակվել անհրաժեշտ տեղեկատվությամբ:

- "Եվրոպական տեղական ժողովրդավարության շաբաթ"-ը (ELDW) ամենամյա Եվրոպական միջոցառում է, երբ Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ երկրներից ՏԻՄ մարմինները, իրենց միությունները և հասարակական կազմակերպությունները հնարավորություն ունեն կազմակերպելու հանրային հանդիպումներ իրենց քաղաքացիների հետ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ նպատակ ունենալով խթանելու և ամրապնդելու ժողովրդավարական մասնակցությունը տեղական մակարդակում: Կոնգրեսի ELDW նախաձեռնող վեբկայքը (http://www.congress-eldw.eu/) կարող է օգտագործվել նաև որպես քաղաքացիների մասնակցության վերաբերյալ լավագույն փորձի փոխանակման հարթակ:

- ՄԱԿ-ը ուսումնասիրում է տարբեր երկրներում էլ. Կառավարման, այդ թվում նաև էլ. Մասնակցության վիճակը և հրապարակում ցուցիչներ (e-participation index): Ներկայացվել է, որ այդ ցուցիչը Հայաստանի համար 2 տարիների ընթացքում զգալիորեն աճել է: 2012թ. համեմատությամբ 2014թ. Հայաստանում էլեկտրոնային մասնակցության ցուցիչը նախկին 161-րդ տեղից իջել է՝ զբաղեցնելով ներկայիս 59-րդ տեղը: Հղումը՝ http://unpan3.un.org/egovkb/en-us/Data/Compare-Countries/: Նիդերլանդները, Հարավային Կորեան, Ֆրանսիան, Ուրուգվայը, Ավստրալիան, Ճապոնիան և Էստոնիան զբաղեցնում են առաջին տեղերը գնահատման այս սանդղակում: Ռուսաստանը մեծ քայլեր է կատարում այս խնդրի լուծման ուղղությամբ առաջընթաց գրանցելու համար:

Հայաստանյան դիտարկումներ.

- Մարդիկ նույնն են բոլոր երկրներում և նրանք կուզենային ունենալ բարելավված պայմաններ իրենց համայնքներում: Խնդիրը նրանումն է, որ քաղաքացիների մասնակցության համար կան տարբեր ելակետային մակարդակներ: Սա է տարբերությունը: Մեկ այլ կարևոր հանգամանք է տարիների փորձառությունը:

- Անհրաժեշտ է ընտրել քաղաքացիների մասնակցության ճիշտ եղանակը՝ դուրս գալով տվյալ համայնքի մշակույթից, ավանդույթներից և առանձնահատկություններից:

- Քաղաքացիների մասնակցությունը չպետք է դիտվի որպես խոչընդոտ ՏԻՄ-ի ամենօրյա աշխատանքներում:

- Քաղաքացիները պետք է գիտակցեն, որ իրենց մասնակցությունն առնվազն ընտրություններին պարտադիր է:

Մի քանի բառով. Մասնակցությունը և երկխոսությունը վերաբերմունք են, որոնք վճռորոշ դեր ունեն կառավարման մակարդակում: Տեսության մեջ բացատրական դեր կատարելուց զատ, դրանք պետք է դիտվեն որպես խնդիրների լուծման և ռեսուրսների մոբիլիզացման գործիք:

Ստորև բերված են լավագույն փորձերի օրինակներ, որոնք դուք կարող եք հեշտությամբ կապակցել Ձեր առօրյա գործունեության հետ և կիրառել աշխատանքում: Փորձառությունները վերցված են Տեղական ժողովրդավարության գործակալությունների համացանցից, ինչպես նաև եվրոպական այլ կառույցներից:

Ավելին՝ www.alda-europe.eu

2.2. Քաղաքացիների մասնակցության փորձի ներկայացում Հարավային Կովկասում

2. 2. 1. «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամ[7]

Հայաստանի Գյումրի քաղաքում 2011թ. հիմնադրված «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամի նպատակն է եվրոպական գործընկերների աջակցությամբ հանդես գալ կոնկրետ նախաձեռնություններով տեղական մակարդակում ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ու իշխանությունների միջև համագործակցության ամրապնդման համար: Այն իրականացրել է մի շարք գործողություններ որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների մասնակցության ուղղությամբ: Քաղաքացիների մասնակցության մասով ձեռք բերված փորձառությունը պարզորոշ ցույց է տվել, որ քաղաքացիների մասնակցությունը **հենց այնպես տեղի չի ունենում, ոչ էլ ինքնաբեր գործընթաց է**: Կան մասնակցության մի քանի **նախապայմաններ**, որոնք բավարարելու դեպքում մասնակցությունը կոնկրետ իրավիճակում կարող է կիրառվել և կայուն բնույթ կրել:

- Մասնակցությունը պետք է լինի աստիճանաբար մշակված պատասխան քաղաքացիների ընթացիկ և անհետաձգելի հավաքական կարիքներին: Կարիքը դառնում է ոգեշնչող միտք համայնքի համախմբման համար:
- Մասնակցային գործողությունից շահող թիրախ խումբը պետք է հստակորեն որոշվի, որպեսզի ընդհանուր շահը օգտագործվի վերջինիս դիրքերը ապահովելու և կենսապայմանները բարելավելու համար:
- Հույժ կարևոր է ընտրված թիրախ խմբին հասկանալի ձևով իրազեկել ծրագրին առնչվող բոլոր առանձնահատկությունների մասին՝ ներառյալ նպատակները, ֆինանսավորումը, տեխնոլոգիաները, կազմակերպման, կառավարման ձևերը:
- Համայնքի, կազմակերպության, կառույցի սահուն գործառնությունը կատարյալ զարգացում է ապրում բնակիչների հավաքական ջանքերի, ընդունելի ղեկավարի աջակցության շնորհիվ: Սա խիստ կարևոր գործոն է բնակիչների ձգտումները ներկայացնելիս:

Դուրս գալով ՏԺԳ Հայաստանի փորձառությունից՝ քաղաքացիների մասնակցության խթանումը խոչընդոտող գործոններն են կարծրատիպերը, նախորդ կառավարության ժառանգությունը և, իհարկե, սոցիալական պայմանները, որոնք սահմանափակում են համայնքի անդամների համատեղ աշխատելու հնարավորությունները: Այնուամենայնիվ, ցանկացած համայնքում կարելի է գտնել մի շատ ակտիվ խումբ, որը կկարողանա ներգործել տեղական իշխանությունների վրա և ձևավորել որոշումների կայացման միջավայր ողջ համայնքում:

Քաղաքապետարանների աշխատակազմերի հետ դասընթացների ժամանակ պարզ դարձավ, որ բոլոր մասնակիցները քաղաքացիների հետ **աշխատելու անհրաժեշտ տեղեկատվության և կարողությունների ձևավորման** կարիք ունեն:

Համաձայն օրենսդրության՝ Հայաստանում կան քաղաքացիների մասնակցության տարբեր տեսակներ, որոնք ամրագրված են օրենքով, և նրանցից մի քանիսը օգտագործվում են համայնքների կողմից, կամ առնվազն քայլեր են ձեռնարկվում քաղաքացիների մասնակցային գործընթացների իրականացման ուղղությամբ:

- հանրային նախաձեռնություններ և հանրային լսումներ կազմակերպվեցին Դսեղում և Ալավերդիում, որին քաղաքացիներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին:
- Աշտարակում, Վարդենիկում, Եղեգնաձորում քառամյա ռազմավարական ծրագրերի քննարկումներն անցկացվում են ինտերնետային հաղորդակցության /Facebook/, հեռախոսային հարցումների միջոցով:
- Որոշ համայնքներում (Վարդենիկ, Հովտաշեն) քաղաքացիների խմբի կողմից տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնություններ եղան, սակայն ռեսուրսների բացակայության պատճառով հանրաքվե այդպես էլ չանցկացվեց:
- Գյումրիում հանրային լսումներ անցկացվեցին քաղաքի մի շարք կարևոր հարցեր քննարկելու նպատակով:
- Գյումրիում և Վանաձորում քաղաքապետարանները տրամադրում են տեղեկատվություն ավագանու նիստերի օրակարգի և որոշումների մասին:
- Վանաձորում անցկացվեց հանրային քննարկում 2015թ. տարեկան բյուջեն մինչ ավագանու կողմից հաստատելը քննարկելու համար:
- Գյումրիում ավագանու նիստերն անցնում են դռնբաց և հեռարձակվում առցանց սկսած 2012 թ հուլիսի 3-ից (իրականացվում է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ջանքերով):

7 http://www.alda-europe.eu/newSite/lda_dett.php?id=11

2.2.2. Վրաստանի Տեղական Ժողովրդավարության Գրասենյակ[8]

2006թ.Վրաստանում հիմնադրված Տեղական ժողովրդավարության գործակալությունն իրականացնում է ակտիվ քաղաքացիական մասնակցությունն ուլավ կառավարումը խթանող ծրագրեր: Քութաիսիում և փոքր համայնքներում նրանք անցկացնում են դասընթացներ տեղական իշխանությունների պարտավորությունների և որոշումների կայացման գործընթացներին քաղաքացիների մասնակցության իրավունքների վերաբերյալ բնակչության իրազեկությունը բարձրացնելու նպատակով: Դասընթացներից հետո քաղաքացիները հնարավորություն ունեցան գրելու **համայնքի տարբեր խնդիրներին և դրանց լուծմանն առնչվող հանձնարարականներ**, որոնք ներկայացվեցին համայնքների ղեկավարներին: Հեռուստաթերներ և հանդիպումներ կազմակերպվեցին նշված համայնքների ղեկավարների հետ, որոնք տարբեր պատասխաններ ու բացատրություններ, ինչպես և լուծումներ տվեցին մի շարք հարցերի: Համայնքների ղեկավարների և քաղաքացիների մասնակցությամբ կազմակերպվեցին ֆորումներ, որտեղ երկու կողմերին էլ հնարավորություն ընձեռնվեց հարցեր բարձրացնել, հանդես գալ առաջարկություններով ու դիտողություններով և երկխոսություն ձևավորել:

Այսպիսով հանձնարարականները, հեռուստաթերները, հանդիպումները և ֆորումները նույնպես կարող են համարվել **քաղաքացիական մասնակցության միջոցներ:**

Խնդրագրերը, հանրային լսումները և քաղաքացիների ներկայացուցչական խմբերը նախատեսված են Վրաստանի օրենքով, բայց գործնականում դրանք քիչ են կիրառվում, թեև որոշ իրավունքներ հնարավորություն են ստեղծում քաղաքացիների մասնակցության գործընթացների իրականացման համար:

- Սակրեբուլոյի /քաղաքի ավագանի/ նիստերը դռնբաց են և հանրային
- Քաղաքացիներն իրավունք ունեն տեղեկատվություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնից և հանրային ծառայողներից
- Սակրեբուլոյի նիստերի արձանագրությունները հասանելի են հանրությանը: Քաղաքացիներն իրավունք ունեն նախապես ծանոթանալ տեղական ինքնակառավարման մարմնի կայացրած որոշումներին և մասնակցել դրանց ուսումնասիրմանը:
- Քաղաքացիներն իրավունք ունեն պահանջել նախագծային որոշումների տպագրություն և հանրային քննարկումների կազմակերպում:

Սակրեբուլոն անցկացվելիք նիստերի մասին տեղեկատվությունը հիմնականում փակցնում է վարչական շենքերի հայտարարության տախտակների վրա: Միայն հաշված մամլո ծառայություններ են նիստերի վերաբերյալ տեղեկատվություն տարածում: Այն շրջաններում, որտեղ կան տեղական հեռուստակայաններ և թերթեր, նիստերին վերաբերող տեղեկատվությունը և ընդունված որոշումները տարածվում են հեռուստահաղորդումների և թերթերում տպագրված հոդվածների միջոցով: Հետևաբար, հետաքրքրվածությանդեպքումնիստերիանցկացմանամիս, ամսաթվի և օրակարգերի մասին տեղեկատվությունը հասանելի է: Բայց և այնպես հետաքրքրվածության մակարդակը ցածր է: Հանրային տեղեկատվություն ստանալու տեսանկյունից ևս բնակչության հետաքրքրվածության աստիճանը ցածր է: Ըստ մի քանի ՏԻՄ ներկայացուցիչների՝ բնակիչները երբևէ նմանատիպ տեղեկատվություն չեն պահանջել: ՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներն առավել հետաքրքված են այսօրինակ տեղեկատվությամբ: Օրենքով սահմանված կարգով հանրային տեղեկատվություն պահանջելու պայմանները հազվադեպ են խախտվում: Չնայած սրան՝ հանրային տեղեկատվության ուշացման առանձին դեպքեր են արձանագրվել յոթ ՏԻՄերում են:
Ինչ վերաբերում է ՁԼՄ-ների ներկայությանը Սակրեբուլոյի նիստերին, ներկայացուցիչներ լինում են, սակայն ՏԻՄերի մեծ մասում հազվադեպ են նստատեղեր հատկացվում հատուկ ՁԼՄ-ների համար:

2.2.3. Վրաստանի համայնքների Ասոցիացիան և հանձնառությունը քաղաքացիների մասնակցության գործում

Վրաստանի Համայնքների Ասոցիացիան իր փորձառության և համայնքներում մեծ դեր ունենալու շնորհիվ կարող է իսկապես ազդեցություն ունենալ կառավարման փորձի ուղղորդման մեջ: Հիանալի օրինակ է Վրաստանի Համայնքների Ասոցիացիայի, Վրաստանի Տեղական Ժողովրդավարության Գրասենյակի և Եվրոպական Ասոցիացիայի հանուն ժողովրդավարության համատեղ ծրագիրը, որի նպատակն էր համագործակցելու կարողությունների զարգացման դասընթացներ վարել Վրաստանի ՀԿ-ների և ՏԻՄ ներկայացուցիչների համար: Կասկադային մոտեցման վրա իրականացված ծրագրի շրջանակներում ստեղծվեցին դասընթացավարների խմբեր Վրաստանի Հարավ-Արևելքում և Հյուսիս-Արևմուտքում: Այսպիսով, քաղաքացիների մասնակցության փորձառության սեմինարներին և միջոցառումներին մասնակցեցին ՀԿ-ների և ՏԻՄ-երի ավելի քան հարյուրավոր ներկայացուցիչներ: Կարող ենք ասել, որ ի շնորհիվ Վրաստանի համայնքների Ասոցիացիայի՝ Վրաստանի իրավիճակի վերաբերյալ փորձառության և գիտելիքի, շրջանի գրեթե բոլոր համայնքապետարանները և հեռավոր ՀԿ-ներ ծանոթացան քաղաքացիների մասնակցության փորձին:
Այսպիսի լայնամասշտաբ և կառուցվածքային մոտեցումը ավելի տեսանելի և համապատասխան կդառնա հետագա տարիների ընթացքում:

Տես: Համախմբված հասարակություն հանուն տեղական ժողովրդավարության
http://www.alda-europe.eu/newSite/project_dett.php?ID=73

8 http://www.alda-europe.eu/newSite/lda_dett.php?id=11

2.3. Քաղաքացիների մասնակցության եվրոպական երկրների փորձի ներկայացում[9]

2.3.1. Լուծում պահանջող խնդիր: **Հասարակական ժամանցային տարածքի վերականգնում, Բուդապեշտ (Հունգարիա)**

Խիտ բնակեցված թաղամասերում **հասարակական ժամանցի վայրերը** (խաղահրապարակներ, մարզական տարածքներ, զբոսայգիներ, ճեմուղիներ) **վերականգնելու անհրաժեշտություն**: Դա նուրբ մի հարց էր, որի լուծումը պահանջում էր ինչ-որ կերպ համաձայնության ձեռք բերում թաղամասի ողջ բնակչության միջև:

Ոլորտ. Ակտիվ քաղաքացիություն տեղական մակարդակում, քաղաքացիների մասնակցություն տեղական խնդիրներին

Թիրախ տեղական իշխանություններ նեն. Բուդապեշտի քաղաքապետարան, Հունգարիա

Գործիքներ. Հասարակական ժամանցի վայրերի վերականգնմանն ուղղված որոշումների կայացման գործընթացում քաղաքացիներին ընդգրկելու համար (բնակելի թաղամասի ողջ բնակչությունը, շուրջ 3200 մարդ) հասարակական կարծիքի հարցման անցկացում և հանրային ֆորումների կազմակերպում:

Մեթոդաբանություն.

- **Առաջին քայլ:** համաձայնության հասնելու խնդիրը լուծելու համար քաղաքապետարանը իրականացրեց հասարակական կարծիքի հարցում՝ տրամադրելով ընդհանուր տեսակետ, թե ըստ բնակիչների համայնքը ինչպիսի խնդիրներ և զարգացման կարիքներ ունի: Այս ուսումնասիրությունն անցկացվեց որպես անվտանգության միջոց մասնակցային գործընթացում մասնավոր շահագրգիռ խմբերի գերակշռությունից խուսափելու համար:

- **Երկրորդ քայլ**: կազմակերպվեցին մի շարք հանրային ֆորումներ՝ բնակելի թաղամասի տարբեր հատվածներում: Այս ֆորումների ժամանակ բնակիչները հնարավորություն ունեցան նկարագրելու ժամանցային վայրերի խնդիրները, արժեքները և զարգացման կարիքները: Մասնակիցներին խնդրեցին հասարակական կարծիքի հարցման միջոցով հավաքված զարգացման առաջարկությունների նկատմամբ սահմանել առաջնահերթություններ:

- **Երրորդ քայլ:** օգտագործելով կարծիքների հարցման տվյալները և հասարակական ֆորումների ամփոփագրերը՝ մշակվեց զարգացման ծրագիր: Ծրագիրը մշակողներին խնդրվեց կազմել զարգացման բաց պլաններ՝ ըստ նախագծվող ծրագրի: Այնտեղ, ուր եղել էին միմյանց հակասող զարգացման առաջարկություններ (օր.՝ խաղահրապարակ, թե հիմնովին կանաչ տարածք), ծրագիր մշակողները տվյալ տարածքի համար պետք է ներկայացնեին զարգացման այլընտրանքային տարբերակներ:

- **Չորրորդ քայլ**: Ծրագրի հայեցակարգը հնարավոր այլընտրանքային տարբերակների հետ ներկայացվեց հասարակական ամփոփիչ ֆորումին, որտեղ կային զարգացման ավելի շատ տարբերակներ և մասնակիցներին առաջարկվեց, ըստ նախընտրության, առաձնացնել մեկը: Ապա մասնակիցներին խնդրեցին կազմել ծրագրերի հնարավոր զարգացման մի քանի առաջնահերթությունների ցուցակ: Սա անհրաժեշտ էր, քանի որ օգնելու էր մեզ որոշել, թե որ առաջարկությունների վրա ծախսել սահմանափակ բյուջեն: Ամփոփիչ ֆորումից հետո ծրագրի հայեցակարգը հրապարակվեց, և, համաձայն դրա, մանրամասն կառուցողական նախագծեր մշակվեցին:

Ստացված արդյունքներ: Հասարակության մասնակցության նախագծի պլանավորման արդյունքում բնակիչները ոչ միայն լիովին տեղեկացան զարգացման նպատակների և ծրագրի իրականացման ժամկետների մասին, այլև մասնակցության շնորհիվ նրանք այս ծրագիրն ընդունեցին ինչպես իրենց սեփականը: Չնայած շինարարական աշխատանքների հետևանքով պատճառված անհարմարությանը և անհանգստությանը՝ բնակիչներից ստացված բողոքները մյուս վերականգնողական ծրագրերի հետ համեմատ ավելի փոքրաթիվ էին: Շինարարության ավարտից հետո նրանք անցկացրեցին հասարակական կարծիքի նույնատիպ հարցում, ինչպիսին իրականացրել էին ծրագրի մշակումից առաջ: Սա հնարավորության տվեց նրանց գնահատել բնակելի թաղամասի ժամանցային գործառույթների մեծացման հաջողությունը՝ հիմք ընդունելով օգտվողների տեսակետը: Կարծիքային հարցումները պարունակում էին հետևյալ ենթատեքստը, թե արդյոք ծրագրի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը բավարար էր, և թե արդյոք քաղաքապետարանը հաշվի էր առել բնակիչների կարծիքները, առաջարկություններն ու պահանջները: Երկու հարցերի դեպքում էլ, պատասխանները նշվել էին չորսից բարձր (մեկից հինգը գնահատման սանդղակով, որտեղ հինգը ամենաբարձր գնահատականն էր): Սա ցույց է տալիս, որ բնակիչները գոհ էին ոչ միայն վերակագնողական աշխատանքների արդյունքից, այլ նաև հաղորդակցման մակարդակից և ձևից:

9 Նշված դեպքերի մեծ մասը վերցված է Տեղական ժողովրդավարության եվրոպական ասոցիացիայի ՈՐՈՇԻՐ և ԺԱՌԱՆԳԱԿԻՑՆԵՐ ծրագրից, որոնք ներկայացնում են ԵՄ-ում քաղաքացիների մասնակցության լավագույն փորձերն ու մեթոդաբանությունները: Տե՛ս այստեղ՝ http://www.alda-europe.eu/newSite/project_dett.php?ID=57. http://www.alda-europe.eu/newSite/project_dett.php?ID=43

2.3.2. Լուծում պահանջող խնդիր:
Աղտոտված միջավայր, **Բիրգու**, (**Մալթա**)

Անառողջ միջավայր Բիրգուում (Մալթա), խիտ բնակեցված քաղաք, օդի աղտոտվածություն

Ոլորտ: Բնապահպանական և առողջապահական հարցեր Թիրախըտեղական

Իշխանություններնեն: Բիրգուի ավագանի, Մալթա:

Գործիքներ: Բնապահպանական խնդիրների վերաբերյալ դասընթացներ, փորձագետների օժանդակություն, քաղաքացիների ներկայացուցչական խմբեր և հանձնարարականների նախագծեր՝ քաղաքացիների, տեղական իշխանությունների և հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Մեթոդաբանություն: ԵՄ և տեղական մակարդակով կազմակերպվեցին երեք դասընթացներ: Դասընթացների ընթացքում քննարկված հիմնական թեմաներն էին՝ շրջակա միջավայրը, ուր մենք ապրում ենք, շրջակա միջավայրին սպառնացող ուղղակի վտանգները և քաղաքներն ու քաղաքացիներին շրջապատող օդի որակը: Ոլորտի մասնագետներ էին հրավիրվել, որպեսզի ներկայացումների (պրեզենտացիաների) միջոցով օգնեին համայնքին հասկանալու առողջ շրջակա միջավայրում ապրելու կարևորությունը և նվազ աղտոտված օդ ունենալուն ուղղված լուծումները քննարկելու նպատակով ցույց տային կապը օդի աղտոտվածության և հանրային առողջապահության միջև: Համայնքը հնարավորություն ունեցավ բարձրաձայնել բնապահպանական խնդիրներին վերաբերող իր անհանգստությունների և այն խնդիրների մասին, որոնց բախվում է որպես խիտ բնակեցված քաղաքում ապրող համայնք: Զանազան խնդիրներ նշվեցին և լուծման տարբերակներ քննարկվեցին: Համայնքի մասնակցությունը բարձր էր՝ ի ցույց դնելով այն մեծ ցանկությունը, որ վերջինս ուներ իր բարեկեցությանն առնչվող հարցերում, ինչպես և համապատասխան որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելու մասով: Երեք դասընթացների շրջանակում նշվեց նաև, որ Եվրոպական Միությունը անդրադարձել է հարցի կարևորությանը, և որոշակի գործողություններ են ձեռնարկվում թե՛ եվրոպական մակարդակով և թե՛ Մալթայում: Փորձագետներին, տեղական իշխանությունների ներկայացուցիչներին և տարբեր կրթական մակարդակ ունեցող շարքային քաղաքացիներին մեկտեղ հավաքելը դարձավ գլխավոր բանալի հանձնարարականները նախագծելու հարցում հասարակության տարբեր հատվածների ձայները միավորելու համար: Փաստաթուղթը, որում պատկերված էր Մալթայում իրականացված տեղական ողջ գործընթացի հիմնական արդյունքը, հանձնվեց տեղական և պետական իշխանություններին:

Ստացվածարդյունքներ: Սեփական տարածքը վտանգող շրջակա միջավայրի պահպանման պահանջների խախտումների վերլուծությունից հետո տարբեր սոցիալական, մասնագիտական և դեմոգրաֆիկ տվյալներ ունեցող քաղաքացիներ հավաքվեցին քաղաքացիների ներկայացուցչական խմբերում և նախագծեցին հանձնարարականների շարք տեղական, մարզային և պետական իշխանություններին ներկայացնելու համար: Ավելի քան 200 մարդ էր համապատասխանաբար ընդգրկվել յուրաքանչյուր տեղական գործընթացում Ալբանիայում, Բուլղարիայում, Խորվաթիայում, Իտալիայում, Մակեդոնիայում, Մալթայում, Ռումինիայում և Սլովենիայում: Հիմք ընդունելով տեղական փորձառությունները՝ քաղաքացիական դիտորդները 2014թ. մայիսի 13-15-ը հավաքվեցին Իտալիայի, Ապուլիա շրջանի Մեսայն քաղաքում: Միջոցառումն այստեղ էր բերել ավելի քան 60 միջազգային մասնակիցների և 50 տեղացիների՝ քննարկելու բնապահպանական և առողջապահական հարցեր: Դա առիթ էր կիսելու ընդհանուրին վերաբերող խնդիրները և փոխանակելու լավագույն փորձը այն մասին, թե ինչպես տեղական իշխանությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են համատեղ աշխատել նմանատիպ խախտումները կանխելու համար:

Հանձնարարականների նախագծեր:

- Իշխանական տարբեր թևերի ներկայացուցիչների և ավագանու անդամների մասնակցությամբ կանոնավոր դասընթացների և բաց քննարկումների անհրաժեշտություն:
- Հանդիպման տեղերի ստեղծում, որտեղ ներկայացված բողոքներին կարելի է ընթացք տալ և կատարված աշխատանքների առաջընթացը ստուգել:
- Քաղաքացիների խորհրդատվություն և քվեարկելու իրավունքի տրամադրում, երբ ավագանու կամ կենտրոնական կառավարության առաջարկությունը հիմնական աշխատանքների վերաբերյալ կարող է ազդել վերջիններիս բարեկեցության վրա: Մարդկանց ձայնի արժևորում:
- Երկխոսություն հարևան համայնքների ավագանիների հետ՝ հիմք ընդունելով ստույգ հարցերի ընդհանրական բնույթը կամ հարևան համայնքների վրա վերջիններիս հնարավոր ազդեցությունը:
- Ավագանու անդամի նախագահությամբ ենթահանձնաժողովների ստեղծում՝ քաղաքականություն/աշխատանքային գործողություններ նախապատրաստելու համար, վերոնշյալ բոլոր հարցերի կենտրոնացում ավագանու պատասխանատվության ներքո: (Արդեն գործող, որոշ տարածքներում հավելյալ ներդրումներ են անհրաժեշտ):
- Հանրությանը ավելի շատ ինֆորմացիայի տրամադրում հաղորդակցման նոր ձևերի միջոցով, օր.՝ facebook, տեղեկատու թերթիկներ, ավագանու լրատու (Ավագանին տեղեկություն է տեղադրում տեղական խորհրդի կայքէջում):

2.3.3. Լուծում պահանջող խնդիր:
Համայնքի զարգացում (Լատվիա)

Թույլ համագործակցություն տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև: Քաղաքացիները տեղեկացված չեն զարգացման խնդիրների մասին:

Ոլորտ: Հզորացնել զարգացումը տեղական մակարդակում:

Թիրախ տեղական իշխանություններ նեն: Լատվիայի տեղական ինքնակառավարման մարմիններ (Բաուսկայի քաղաքապետարան, Ժելգավայի քաղաքապետարան, Գուլբենեի քաղաքապետարան):

Գործիքներ: Ծրագրի առաջարկներ ներկայացնելու իրավեր, Գնահատող հանձնաժողովի ստեղծում, քաղաքացիների, տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներգրավում:

Մեթոդաբանություն: 2013թ. փետրվարին դրամաշնորհային մրցույթի արդյունքում ընտրվեցին երեք ծրագրեր, որոնք համաֆինանսավորվեցին: Ծրագրերը ներկայացվել էին Լատվիայի երեք քաղաքապետարանների կողմից Վրաստանի, Բելառուսի և Մոլդովիայի քաղաքապետարանների հետ համատեղ:

- **Բաուսկայի քաղաքապետարան:** Ծրագիրը շեշտադրում էր «Զարգացման համագործակցային հնարավորությունները ցանցային համագործակցության, տեղեկատվության փոխանակման և ուսուցման միջոցով»: Գլխավոր նպատակները. Բարձրացնել հասարակության և քաղաքացիների իրազեկությունը, հմտությունները և կարողությունները տեղական մակարդակում. Ձևավորել ցանցային համագործակցություն Բաուսկայի և Խաշուրիի (Վրաստան) քաղաքապետարանների միջև: Իրականացված գործողությունները. 2013թ. օգոստոսին կազմակերպվեց «Համագործակցային փորձառության մշակում և քաղած դասեր» թեմայով դասընթաց: Վրացի նկարչի մասնակցությունը միջազգային բացօթյա նկարչության փառատոն «Բաուսկա, ամառ 2013»-ին: Ստեղծագործական վարպետության դասերի կազմակերպում Բաուսկայի Երեխաների և երիտասարդների արհեստի ու արվեստի կենտրոնում: Մասնակցություն Բաուսկայի քաղաքապետարանի կողմից կազմակերպված 2013թ. փառատոնին: Տեղեկատվական քարոզարշավ: Հոդվածների տպագրում տեղական և տարածաշրջանային թերթերում, էլեկտրոնային էջերում, համագործակցություն մշակելու վերաբերյալ էլեկտրոնային գովազդային նյութերի ստեղծում:

- **Ժելգավայի քաղաքապետարան**: «Ակտիվ գործընկերություն և համայնքներ հանուն զարգացման» ծրագիր, որի նպատակն էր հզորացնել Մոլդովայի և Լատվիայի քաղաքապետարանների միջև արդեն իսկ ձևավորված համագործակցությունը՝ այսպիսով խթանելով կայուն զարգացումը և ստեղծելով համագործակցություն, բարելավելով կայուն զարգացման վերաբերյալ Մոլդովայի տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև նպաստելով քաղաքացիների իրազեկության բարձրացմանը: Իրականացված գործողություններ. Ժելգավայի քաղաքապետարանի (Լատվիա) կողմից կազմակերպվեց ուսուցողական այց Կահուլի քաղաքապետարանի (Մոլդովա) ներկայացուցիչների համար: Լավագույն փորձի փոխանակման նպատակով ցանցային համագործակցություն և դասընթաց կազմակերպվեց: 2013թ. հոկտեմբերին ծրագրի ավարտից հետո կայացավ հերթական հանդիպումը հետագա համագործակցության քայլերը պլանավորելու նպատակով:

- **Գուլբենեի քաղաքապետարան:** «Ստրուվեն միավորվում է դարերի ընթացքում» ծրագիրն իրականացվեց Գուլբենեի քաղաքապետարանի (Լատվիա) կողմից Բելառուսիայի Աշմյանի շրջանի գործընկերների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը համախմբեց տեղական իշխանությունների, ՀԿ-ների, երիտասարդական կենտրոնների ներկայացուցիչներին, բելառուս գործընկերներին և քաղաքացիներին: Հիմնական քայլերը. «ՀԿ դերը որոշումների կայացման գործընթացում» սեմինար-վարժանք, «Ստրուվեի կատարած հարցումը խթանում է համագործակցության զարգացումը» թեմայով դասընթաց, արշավ:

Ստացված արդյունքներ: հանրության և քաղաքացիների իրազեկվածություն, համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի շուրջ ձեռք բերված հմտություններ և կարողություններ, ԵՄ զարգացման քաղաքականությանը և կայուն զարգացմանն ու քաղաքացիների հզորացման հարցերի իրականացմանն ուղղված տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ակտիվ դերակատարում:

2.3.4. Լուծում պահանջող խնդիր:
Տնտեսական ճգնաժամ, Սասիլ (Իտալիա)

Եվրոպան կլանող դրամատիկ ճգնաժամի հակազդմանն ուղղված հնարավոր ռեսուրսների խթանման անհրաժեշտություն՝ այդ թվում տեղական ռեսուրսների (տեղական իշխանություններ, գործարար համայնք, քաղաքացիական հասարակություն) և քաղաքացիների (համայնքի կյանքին ակտիվ մասնակցություն՝ կամավոր աշխատանքի միջոցով) համապատասխան ներգրավում:

Ոլորտ: Նորույթներ և նոր ռեսուրսներ: Թիրախըտեղականիշխանություններնեն:

Սասիլի քաղաքապետարան, Իտալիա Գործիքներ. Թեմատիկ դասընթացներ

Մեթոդաբանություն: Սասիլում, Բրուգներայում և Փորցիայում (Իտալիա) քաղաքացիների, փորձագետների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ՀԿ-ների ներգրավումը «Եվրոպան որպես ռեսուրս» թեմատիկայով դասընթացի կազմակերպմանը: Միջոցառման տրամաբանությունն էր անդրադառնալ Եվրոպային և ակտիվացնել այն դրական ազդեցությունը, որ ԵՄ-ն թողնում է տեղական մակարդակում, ինչպես նաև նպաստել ԵՄ երկրների քաղաքացիների կյանքի որակի բարելավմանը: Ծրագրի ավելի լայնամասշտաբ ազդեցությունն ապահովելու համար՝ միջազգային իրադարձություններից զատ յուրաքանչյուր գործընկեր պետք է ակտիվ գործունեություն ծավալի իր տարածքում իրազեկության բարձրացման և ցանցային համագործակցության ուղիներ գտնելու միջոցով՝ ուղղված ծրագրի թեմաների շուրջ քաղաքացիների մոբիլիզացմանը:

Ստացված արդյունքներ: Քաղաքապետարանի ռեսուրսների առավել արդյունավետ իրացում և արժեքավորում: Սասիլի քաղաքապետարանը Միջքաղաքապետարանային Միության մաս է կազմում և այլ քաղաքապետարանների հետ համատեղ մասնակցում ծառայությունների և աշխատանքների ղեկավարման գործընթացին: Որպես այս միության մաս՝ Սասիլը նաև վայր է տարածքային մարքետինգի պլանավորման և եվրոպական քաղաքականությունների միջքաղաքապետարանային դեպարտամենտի համար և առնչվում է եվրոպական և տեղական զարգացման լայնամասշտաբ ծրագրերի հետ:

Սասիլ քաղաքը կարող է ապավինել տարբեր ռեսուրսների. Լիվենզա գետի ջուրը հանդիսանում է տուրիստական, արդյունաբերական և սպորտային ռեսուրս, շատ պիտանի է նաև փրկարարական նպատակների համար: Տուրիզմն իր հերթին բիզնեսի և հյուրանոցային տնտեսության աղբյուր է, մասնավորապես գեղարվեստական և պատմական ժառանգության և գերազանց արդյունաբերության (ինչպիսին է Ֆազիոլիի դաշնամուրները) շնորհիվ: «Առողջ քաղաքների ցանց»-ը, որին Սասիլը պատկանում է, և «Սասիլի նախատիպը» օրինակ են ծառայում ողջ տարածաշրջանի համար: Պետք է նշել նաև քաղաքում գործող դինամիկ կամավորական ընկերությունների նշանակալից թիվը, ինչպես օրինակ՝ Քաղաքացիական պաշտպանության քաղաքային խումբը:

Գեղարվեստական և պատմական ժառանգության պահպանումը և քաղաքի մշտական խնամքը հաջողության գրավականն են. Հյուրերն ու այցելուները քաղաքում բացահայտում են անզուգական տեսարաններ և դառնում այդ տարածքի ուղղակի գովազդողները:

2.3.5. Լուծում պահանջող խնդիր:
Քաղաքացիական հասարակության զարգացում , Սլովենիա

Հասարակական կազմակերպություններին հատկացվող տարածքի բացակայություն:

Ոլորտ: Ակտիվ քաղաքացիություն տեղական մակարդակում, քաղաքացիների մասնակցություն տեղական խնդիրներին

Թիրախըտեղականիշխանություններնեն: Նովո Մեստոյի քաղաքապետարան, Սլովենիա:

Գործիքներ: Բոլոր այն քաղաքացիների ընդգրկում, ովքեր ակտիվորեն մասնակցում են հասարակության շահերի պաշտպանությամբ և/կամ սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում գործողությունների կարգավորման պլանավորմամբ զբաղվող ՀԿ-ների աշխատանքներին:

Մեթոդաբանություն: Ստորագրելով նախաձեռնություններ՝ ՀԿ-ները պարտադրում են Նովո Մեստոյի քաղաքապետարանին կազմել քաղաքապետարանի կամ պետության սեփականություն հանդիսացող և չշահագործվող տարածքների ցանկ (շենքեր և հողեր) և հանրայնացնել այն: ՀԿ-ները կարող էին այս տարածքներն օգտագործել որպես հավաքատեղիներ ՀԿ անդամների, ինչպես և իրենց աշխատանքներն իրականացնելու համար: Նախաձեռնության նպատակն էր ավելի շատ տարածք հատկացնել հասարակական կազմակերպությունների գործունեության, իսկ, անուղղակիորեն, նաև քաղաքացիների գործառնության համար: Հատկապես ակնառու են լքված տարածքները Նովո Մեստոյի կենտրոնում, որոնք բաց թողնված հնարավորություն են քաղաքի կենտրոնին լրացուցիչ հմայք հաղորդելու և դրանով իսկ վերջինիս գոյատևմանը նպաստելու հարցում: Այս կերպ քաղաքացիները՝ միություններում կատարած իրենց աշխատանքով կնպաստեն այս տարածքների պահպանմանը և միաժամանակ քաղաքի կենտրոնի վերակենդանացմանը:

Ստացվածարդյունքներ: Գների իջեցման միջոցով տեղական իշխանությունները, որպես սեփականատերեր, կարող են օգնել ՀԿ-ներին հասարակության շահերի պաշտպանության ու սոցիալական ձեռնարկատիրության խթանման հարցում: Վարձակալված աշխատատարածքների համար վճարումը լինելով ոչ կանխիկ՝ կկատարվի սոցիալական նորարարությունների և ոչ դրամային սոցիալական շահույթի ձևով, ինչպես օրինակ՝ բարելավված սոցիալական ծառայությունների մատուցումը: Շահագործելով չօգտագործված տարածքները՝ Նովո Մեստոյի քաղաքապետարանը մի մեծ քայլ կանի ՀԿ սեկտորի զարգացման ուղղությամբ՝ ապահովելով բարենպաստ միջավայր վերջինիս՝ առանց հավելյալ ծախսերի գործառնության համար: Միևնույն ժամանակ քաղաքացիները ևս կունենան տարածք, որտեղ իրենց գործունեությամբ կկարողանան նպաստել հասարակության ավելի լայն շերտերի ձևավորմանը:

3.

Գործիքներ և Միջոցներ

Այստեղ ներկայացվում է քաղաքացիների մասնակցության մոտեցման հնարավոր միջոցները և լավագույն մեթոդ ընտրելու հնարավորությունը

3. 1. Քաղաքացիների մասնակցության պատշաճ փորձի ուղեցույց[10]

Մի քանի բառով. Տեղական մակարդակում որոշումներ կայացնելու գործընթացին քաղաքացիների մասնակցությունը կարող է համապատասխանացվել իրավիճակին և առանձին դեպքերի, սակայն յուրաքանչյուր տեղական պաշտոնյա կարող է դա անել: Մենք կարող ենք մոտենալ այս խնդրին մասնակցությանը տարբեր ձևերից /խորհրդակցություն, երկխոսություն կամ համագործակցություն/ կամ այն տեսանկյունից, թե երբ է անհրաժեշտ միջամտել/ գործընթացի սկզբին, կամ երբ գործերն արդեն ընթացքի մեջ են/:«Քաղաքացիական մասնակցության պատշաճ փորձի ուղեցույց»-ն առաջարկում է նաև մի քանի օգտակար ակնարկներ տեղական մակարդակում գործընթացներ իրականացնելու համար:

Ստորև բերվում է մի քանի նախապայման մասնակցության գործընթացները պատշաճ իրականացնելու համար

- **Մասնակցության և արտահայտման ազատություն** - Քաղաքացիները պետք է իրավունք ունենան մասնակցել և ազատ արտահայտել իրենք կարծիքը
- **Վստահություն** –քաղաքացիները պետք է վստահեն իրենց իշխանություններին և համոզված լինեն, որ իրենց խոսքը հասանելի կլինի, ինչպես նաև հարկավոր է լավ գիտակցեն, թե ինչպես է հաշվի առնվելու իրենց ներդրումը
- **Հաշվետվողականություն և թափանցիկություն** – տեղական պաշտոնյաների գործողությունները պետք է կառավարվեն բաց կերպով և նրանք պետք է հաշվետու լինեն քաղաքացիներին
- **Անկախություն** –քաղաքացիները և ասոցիացիները, որոնք ակտիվորեն աշխատում են քարոզչության և տեղական պաշտոնյաների աշխատանքին նպաստելու բնագավառում, պետք է լինեն անկախ և իրականորեն ներդրում կատարեն գործընթացին:

Քաղաքացիների և տեղական իշխանությունների փոխգործունեությունը կարող է լինել ավելի կամ նվազ ինտենսիվ և պարտավորեցնող: Սրանք են **փոխազդեցության մակարդակները:**

10 Տեղեկությունը վերցված է պատշաճ փորձի ուղեցույցից , հղումով http://www.coe.int/en/web/ingo/civil-participation

Տեղեկատվություն. Բ Սա միակողմանի քայլ է, որը փոխանցում է փաստերը տեղական պաշտոնյաներից քաղաքացիներին: Այն մասնակցության հիմնական մասն է: Առանց ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ չկա ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ: Սա շատ կարևոր հարց է, և պետք է հաշվի առնի տեղական պաշտոնյաների կարողությունը՝ հավաքելու և տարածելու տեղեկատվությունը և նրան տալ այնպիսի ձև, որ քաղաքացիները կարողանան ընկալել այն / օրինակ, լեզուն և միջոցները/:

Օրինակներ.
- Նշումներ թերթերում
- Տեղեկատվություն ռադիոյով և հեռուստատեսությամբ
- Ավագանիների բաց աշխատանք
- Փաստաթղթերի հասանելություն

Խորհրդատվություն – Խորհրդատվությունը՝ դա փաստերի և որոշումների ներկայացումն է, և այն բաց է քաղաքացիների հետ քննարկման համար: Պարտադիր չէ, որ քաղաքացիների մեկնաբանություններ անպայման հաշվի առնվեն: Խորհրդատվությունը ոչ պարտադիր գործընթաց է:

Օրինակներ.
- Համաժողովներ
- Հանրային ներկայացումներ
- Դասընթաց
- Առցանց խորհրդակցություններ

Երկխոսություն – երկխոսությունը ներկայացնում է խորհրդակցություն ավելի երկկողմ վերաբերմունքով և արձագանքով քաղաքացիների կողմից: Երկխոսության ժամանակ քաղաքացիների կողմից տրված մեկնաբանությունները հաշվի են առնվում և հանդիսանում են որոշումների ընդունման գործընթացի անբաժանելի մաս: Տեղական իշխանությունները հստակորեն ցույց են տալիս, թե ինչպես են քաղաքացիների մեկնաբանությունները հաշվի առնվելու: Օրինակ, կա աշխատանքային խումբ, որը գրանցում և մշակում է առաջարկները:

Օրինակներ.
- Դասընթաց
- Ֆոկուս խմբեր
- Հանձնաժողովի համատեղ հանդիպումներ / ժողովներ
- Առցանց խորհրդակցություններ և արձագանքներ

Համագործակցություն – Համագործակցությունը ներկայացնում է ամբողջովին ինտեգրված գործընկերություն քաղաքացիների և տեղական պաշտոնյաների միջև, երբ ընդունվում են համատեղ որոշումներ, ծրագրային գաղափարներ և դրանք մշակվում են միացյալ խմբերում:

Օրինակներ.
- Համատեղ հանձնաժողովներ
- Աշխատանքային թիմեր

Փոխազդեցության յուրաքանչյուր մակարդակ կարող է իրականանալ որոշումների ընդունման գործընթացի որոշակի փուլում, որը նկարագրված է ստորև:



Գործընթացը սկսվում է.

1.Օրակարգիհաստատում: Դա նշանակում է, որ որոշակի պատճառով և փաստով, տվյալ հարցը դառնում է «կարևոր» «քաղաքական օրակարգում» ընդգրկվելու համար: Դա կարող է լինել դեպք, օրաթերթում հոդված, քաղաքացիների կողմից պահանջված հանդիպում:

2.Մշակում: Որոշումը մշակվում է և քննարկվում: Մենք ստուգում ենք, թե ինչ գիտենք և քննարկում ենք կողմ և դեմ տարբերակները: Հստակեցվում են լուծումների հնարավոր միջոցները:

3.Որոշում: Սա փաստացի այն է, թե որ լուծումն ենք մենք ընդունում:

4.Իրականացում: սա որոշման իրականացումն է:

5.Վերահսկում: ընդունված որոշման վերահսկում և դրա պատշաճ իրականացում:

6.Վերաձևակերպում: Եթե անհրաժեշտ է վերանայել որոշումը և դրա իրականացումը, ապա մենք քննարկում ենք այլ քայլեր ձեռնարկելու հնարավորությունը կամ այլ քայլերի դիմելը:

«Քաղաքացիական մասնակցության պատշաճ փորձի ուղեցույց»-ը[11] սահմանում է հարաբերությունները մասնակցության մակարդակի և որոշումների ընդունման գործընթացի միջև՝ տրամադրելով քայլեր և առաջարկություններ:

3. 2. 15 ոսկե կանոն հանրային հանդիպումներ կազմակերպելու համար

Քաղաքացիների հետ հանրային խորհրդակցություն և երկխոսություն կազմակերպելու համար, ձեզ հարկավոր կլինեն որոշակի հատուկ կանոններ հաջողության հասնելու համար:

15 լավագույն խորհուրդ՝ որպես հանրային հանդիպումների հաջողության գրավական:

1. **Բաժանել գրավոր նյութերը ի սկզբանե** /կամ հրատարակել պլակատների մեջ՝ փակցնելով պատերին, ներառելով «խաղի կանոնները», որպեսզի մարդիկ կարողանան ծանոթանալ այդ նյութերի հետ:

2. **Ներկայացնել /բանավոր կամ պլակատների միջոցով/** այն տեղական իշխանության **իրավասությունները/կարողությունները**, որը ներառված է գործընթացի մեջ, որպեսզի մարդիկ կարողանան կենտրոնանալ իրագործելի առաջարկի վրա, ինչպես նաև կառավարման այլ մակարդակների վերաբերյալ գաղափարներ/խնդիրներ, որի օգնությամբ տեղական իշխանության ներկայացուցիչը կարող է հանդես գալ որպես «միջնորդ»:

3. **Սկսել խաղի հիշեցման ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ և ԿԱՆՈՆՆԵՐԻՑ**: Որոշել, թե յուրաքանչյուր բանավոր միջամտություն ինչ տևողության կլինի:

4. **Ունենալ ժամացույց** (օրինակ պրոյեկտորված պատի վրա), որպեսզի մարդիկ կարողանան հաշվարկել և վերահսկել օրակարգն ու յուրաքանչյուր ելույթի առավելագույն ժամանակը: **Հարգել հանդիպման սկսվելու ժամը** /նրանց համար, որոնք ճշտապահ էին/, բայց ողջունել նորեկներին:

5. **Սահմանել կանոններ՝ հարգանք յուրաքանչյուրի նկատմամբ** /ներառելով իշխանության ներկայացուցիչներին/՝ ցուցաբերելով քաղաքավարություն.

6. **Հարգալից վերաբերվել մասնակիցների կրթական մակարդակին** (խուսափել ասել, թե նրանք «պետք է կրթվեն կամ իրազեկվեն»: Կարևոր է հիշեցնել,որ մենք խոսում ենք մարդկանց հետ, և ժողովի անցկացման վերաբերյալ նրանց ընկալումը կարող է ազդել գործընթացի օրինականության վրա:

7. **Խուսափել ընդհատել մասնակիցներին**, երբ նրանց առաջարկը չի համապատասխանում ժողովի համար նախատեսված ընթակարգին: Պատկերացնել, որ յուրաքանչյուր ներդրում արժեքավոր է համայնքապետարանի համար, եթե նույնիսկ այն կատարյալ չի վերաբերվում կանխորոշված ձևաչափին: Այսպիսի դեպքերում հնարավոր է գրառել առաջարկությունները և դժգոհությունները «հատուկ աշխատանքային գրքում»՝ երաշխավորելով, որ այն կհայտնվի գործընթացի վերջնական փուլում / որպես հավելված կամ կցված փաստաթուղթ/:

8. **Խուսափել** 2 **անձի բանավեճերից**: Եթե մեկը ցանկանում է խոսել մեկ անգամից ավել, նա կարող է /եթե համատեղ մշակված կանոնները թույլ են տալիս/, բայց կարևոր է առաջնահերթություն տալ նրանց, որոնք խոսում են առաջին անգամ:

11 The Code of Good practices has been recently considered for a revision with a more local authorities approach. See the report adopted by the Congress, prepared by Raymond Stevensson

9. **Հնարավորինս աշխատել փոքր խմբերով,** որպեսզի յուրաքանչյուրն իրեն «հարմարավետ» զգա և չկաշկանդվի մեծ լսարանից:

10. Խուսափել ստեղծել բացասական էներգիայիով լի միջավայր, քանի որ դժգոհությունները միշտ կապված են ակտիվ առաջարկությունների/լուծումների հետ

11. **Խուսափել այնպիսի տպավորությունից, որ դասընթացաավարը սերտ հարաբերությունների մեջ է որոշ մասնակիցների հետ,** և գոյություն ունի «հատուկ ընտանիք» լսարանի մեջ /խուսափել օգտագործել այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ «քույրեր և եղբայրներ», «բարեկամ», «ընկեր», կամ դիմել մեկին անունով, իսկ մյուսներին՝ անանուն:

12. **Փորձել «տանել» քննարկումը ճիշտ ուղղությամբ տեսանելի շեղումների և երկատումների դեպքում:** Արգելել որևէ անձնական վիրավորանք, և խնդրել ելույթ ունեցողներին նույնպես խրախուսել իրենց առաջարկությունների օգտակարությունը՝ խուսափելով ընդհանուր արտահայտություններից, ինչպիսին են՝ «յուրաքանչյուրը գիտի, որ...» «մարդիկ կարիք ունեն .. », որոնք անօգուտ ձևեր են հաստատելու առաջարկությունները:

13. **Արժևորել խորհրդանշական պահերը** /ինչպես օրինակ՝ խոսնակների/պատվիրակների քվեարկություն կամ ընտրություններ/, և հանդիպման վերջում, փորձել ամփոփել /հնարավորության դեպքում պրոյեկտորված պատին կամ պլակատի վրա/ օրվա բոլոր նվաճումները/հաջողությունները, ցույց տալ, որ ինչ-որ բան փոխվեց հանդիպման ընթացքում, մարդիկ իմացան կամ որոշեցին:

14. Առաջարկություններ հավաքագրելու ժամանակ, **փորձել դրդել՝ ենթակառուցվածքների/ սարքավորումների պահպանման հնարավոր ծախսերի վերաբերյալ մտորմանը**, որպեսզի մարդիկ պատասխանատվություն վերցնեն ներդրումներ կատարելու համար, առաջարկների իրականացումը հետագայում դարձնել ավելի կայուն:

15. **Առանձին ժամանակ հատկացնել վերջում ոչ պաշտոնական հանդիպման համար /հնարավոր է,** այսպիսի ոչ ֆորմալ շփումը է իրականացնել թխվածքների և խմիչքների փոքր սեղանի շուրջ/ ...

Եզրակացություն

Տեղական մակարդակում քաղաքացիների մասնակցությունը հնարավորություն է մուտք գործել Եվրոպա, Արևելյան Գործընկերություն և Հայաստան: Այն լրացուցիչ արժեք է տեղական կառավարման համար և ձևավորում է համայնքային զգացում, ինչպես նաև բացահայտում է տարբեր շահագրգիռ կողմերի հնարավորությունները: Չնայած դժվարություններին, այն ներկայացնում է կարճաժամկետ նպատակներ Հայաստանում և կարող է լինել գերազանց գործընկեր երկրում ժողովրդավարության ամրացման գործընթացում, ինչպես նաև հանուն զարգացման և կայունության:

Համագործակցություն	Աշխատանքային խումբ կամ կոմիտե	Համատեղ մշակում	Համատեղ որոշումների ընդունում	Ռազմավարական գործընկերություն	Աշխատանքային խումբ կամ կոմիտե	Աշխատանքային խումբ կամ կոմիտե
Երկխոսություն	-Լսումներ և հանրային ֆորումներ -Քաղաքացիների ֆորումներ և ապագա խորհուրդներ -Կապ կառավարության անդամների հետ	-լսումների և հարց ու պատասխանների հարթակ -փորձագետ- ների դասընթացներ -բազմակողմանի շահառուներից կազմված կոմիտեներ և խորհրդատվական մարմիններ	-Բաց լիազումար կամ կոմիտեի նիստ	-կարողություն ների զարգացման դասընթացներ -վերապատ րաստման դասընթացներ	-Աշխատան քային խումբ կամ կոմիտե	-դասընթացներ և խորհրդակց- ական ֆորումներ
Խորհրդատվություն	Պետիցիա -խորհրդատվություն առցանց կամ այլ գործիքների միջոցով	-լսումների և հարց ու պատասխան ների հարթակ -փորձագետ- ների դասընթացներ -բազմակող մանի շահառու ներից կազմված կոմիտեներ և խորհրդատվական մարմիններ	-Բաց լիազումար կամ կոմիտեի նիստ	-միջոցառումներ համաժողովներ, ֆորումներ, դասընթացներ	-Հետադարձ կապի մեխանիզմ	-համաժողովներ կամ հանդիպումներ -առցանց խորհրդատվու թյուն
Տեղեկատվություն	-Տեղեկատվության բաց և ազատ մուտք - Հետազոտություն -Քարոզարշավ և լոբբինգ -հիմնական փաստաթղթերով վեբ-կայք	-քաղաքական փաստաթղթերի բաց և ազատ հասանելիություն -հիմնական փաստաթղթերով վեբ-կայք -Քարոզարշավ և լոբբինգ -վեբ հեռարձակումներ -հետազոտա կան ներդրում	-Քարոզարշավ և լոբբինգ	- տեղեկատ վության ազատ մուտք -վեբ-կայքեր -էլեկտրոնային նամակների ազդակ -հաճախ տրվող հարցեր Հասարակության տեղեկատվին	-տեղեկատ վության ազատ մուտք -փաստերի հավաքա գրում -գնահատում -հետազոտա կան ուսում	-տեղեկատվության ազատ հասանելիություն
Մասնակցության մակարդակներ	Օրակարգի հաստատում	Մշակում	Որոշում	Իրականա- գում	Մշտադի տարկում	Վերաձևակեր պում